Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material



# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՂԻՇԷԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1927
ՌՅՀԶ - 1376

A III/2908

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Օրէնք օրհնելոյ սպաս Եկեղեցւոյ. Յորժամ կամիցի Քահանայն Պատարագ մատուցանել:

Պարտի այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ:

Մտցէ յաւանդատունն հանդերձ Սարկաւագօքն ուր զգեստքն են Պատարագի:

Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի:

Ասասցեն սաղ. Սաղմոս, ՃԼԱ. կցորդ:

ՔԱՀԱՆԱՅՔ ՔՈ զգեցցին զարդարութիւն. և սուրբք քո ցնծալով ցնծասցեն: Փ.փ.

Յիշեա՛ Տէր զԴաւիթ և զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ Տեառն. եւ ուխտ եդ Աստուծոյ Յակոբայ:

Թէ ո՛չ մտից ՚ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանաց իմոց. կամ հանգիստ իրանաց իմոց. մինչեւ գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ:

Ահա՛ լուաք զնմանէ յԵփրաթա. և գտաք զնա ՚ի դաշտս մայրեաց:

Մտցուք ՚ի յարկս նորա. երկիրպագցուք ՚ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա:

Արի՛ Տէր ՚ի հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քո:

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն և սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն Դաւթի ծառայի քո, մի՛ դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց նմա. ՚ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յա-

ւիտեանս յաւիտենից յաթոռ քոյ:

Հաճեցաւ Տէր ընդ Սիոն. և ընտրեաց բնակել ՚ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. ՚ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա:

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից. եւ զաղքատս սորա լցուցից հացիւ:

Քահանայս սորա զգեցուցից զփրկութիւն. եւ սուրբք սորա ցնծալով ցնծասցեն:

Անդ ծագեցից եղջիւր ՚ի Դաւիթ. պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց սորա զգեցուցից զամօթ. և ՚ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Եւ քարոզեսցէ Սարկաւագն:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Խնդրեսցուք հաւատով միաբանութե՜ ՚ի Տեառնէ, զի ողորմութեան ըզշնորհս իւր արասցէ ՚ի վերայ մեր:

Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցուսցէ եւ ողոր՛:

Եւ ասասցեն երկրպագուն
Տէր ողորմեա:

Ո՛վ սրբազան պատարագիչ՝ Յիշեա՛ յաղօթս քոյ զմատակարար եւ զամենայն աշխատաւորս գործարանիս:

Եւ զհոգիս համայն ննջեցելոց նոցին ՚ի Քրիստոս Յիսուս:




INRJ



Աղօթք Առանձնական Պատարագիչ Քահանային
Յառաջ քան Զգգեստաւորիլն։

# ՈՐ ԸԶԳԵՑԵԱԼ ԵՍ

ԶԼՈՅՍ ՈՐՊԷՍ ՀԱՆԴԵՐՁ ՏԷՐ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ
Քրիստոս։ Անճառելի խոնարհութեամբ յերկրի ե-
րեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահա-
նայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի եւ
զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ։ Տէր ամենակալ որ
պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգե-
նուլ։ Արժանի արա՛ եւ զիս ՚ի ժամուս յայսմիկ զան-
պիտան ծառայս քո։ Որ համարձակիմ եւ մերձենամ
՚ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զա-
մենայն ամբարշտութիւնս մերկացայց՝ որ է հանդերձ
պղծութեան, եւ զարդարեցայց լուսով քով. ընկեա՛
յինէն զչարիս իմ, եւ թօթափեա՛ զյանցանս իմ։ Որ-
պէս զի արժանի եղէց հանդերձելոյ լուսոյդ առ ՚ի
քէն։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտա-

նել 'ի պաշտօն սրբու-
թեանց քոց ընդ այնոսիկ,
որք անմեղութեամբ պա-
հեցին զպատուիրանս քո։
Զի և ես պատրաստ գը-
տայց երկնաւոր առագաս-
տիդ ընդ իմաստուն կու-
սանսն. փառաւորել զ-
քեզ Քրիստոս որ բարձեր
զմեղս ամենեցուն։ Զի
դու ես սրբութիւն ան-
ձանց մերոց և քեզ բարե-
բարիդ Աստուծոյ վայելէ
փառք իշխան"։

Եւ մատուցեալ Սարկաւագունքն զգեցու-
ցին նմա զհանդերձսն ասելով.

Եւ եւս խաղաղութեան զՏէր"

Քահանայն։

Օրհնութիւն և փառք Հօր և"

Եւ յետ Օրհնութեանն դիցէ յառաջ ըզ-
խոյրն 'ի գլուխն և ասասցէ.

ԴԻՐ ՏԷՐ ՍԱՂԱ-
ւարտ փրկութեան
'ի գլուխ իմ, պատերազ-
մել ընդ զօրութիւնս թըշ-
նամւոյն։

Շնորհօք Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, որում
վայելէ փառք իշխան"։

Շապկին։

Զգեցո Տէր ինձ հան-
դերձ փրկութեան, եւ
պատմուճան ուրախու-
թեան։ Եւ շուրջ պատեա
զզգեստու փրկութեան։
Շնորհօք Տեառն մեր".

Փորուրարին։

Զգեցո Տէր պարանոցի
իմոյ զարդարութիւն։ Եւ
սրբեա զսիրտ իմ յամե-
նայն աղտեղութենէ մե-
ղաց։ Շնորհօք Տեառն մեր".

Գօտւոյն։

Շուրջ պատեսցէ կամար
հաւատոյ զմէջս սրտի իմոյ
և մտացս։ Եւ շիջուսցէ 'ի
սմանէ զխորհուրդս աղ-
տեղիս։ Եւ զօրութիւն
շնորհաց քոց յամենայն
ժամ բնակեսցի 'ի սմա։
Շնորհօք Տեառն մեր".

Բազպան յաջ ձեռին։

Տուր Տէր զօրութիւն
աջոյ ձեռին իմոյ, և լուա
զամենայն աղտեղութիւ-
նս իմ։ Որպէս զի կարող

լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնորհօք"։

*Բազպան յահեակ ձեռին։*

Տուր Տէր զօրութիւն ձախոյ ձեռին իմոյ, և լուա զամենայն աղտեղութիւնս իմ։ Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնորհօք Տեառն մե"։

*Վակասին։*

Օձեա Տէր պարանոցի իմոյ զարդարութիւն։ Եւ սրբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք Տեառն"։

*Նափորտին որ է Շուրջառ։*

Տէր ողորմութեամբ քով զգեցո ինձ զգեստ պայծառ և պարսպեա ընդդէմ ներգործութեան չարին։ Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ։ Շնորհօք Տեառն մե"։

*Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն ասէ.*

Ցնծասցէ անձն իմ ՚ի Տէր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան. իբրև փեսայի եդ ինձ պսակ. և որպէս զհարսըն զարդու զարդարեաց զիս։ Շնորհօք Տեառն մե"։

*Թաշկինակին։*

Սրբեա Տէր զձեռս իմ յամենայն աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք Տեառն"։

*Եւ յետոյ եկեալ են առաջի Սրբոյ Սեղանոյն։ Եւ Քահանայն լուացէ զձեռս ասելով։ Սաղմոս. ԻԵ. կցորդ։*

Լուացից սրբութեամբ"։

*Սարկաւագն. Փոխ։*

Դատ արա ինձ Տէր զի ես"

*Քահանայն։*

Եւ փառս Սրբոյ Հոգւոյ Աս"։

*Սարկաւագն։*

Սուրբ զԱստուածածինն և"

*Քահանայն։*

Ընկալ Տէր զաղաչանս"։

Խոստովանիմ առաջի Աստուծոյ և սրբուհւոյ Աստուածածնին. և առաջի

ամենայն սրբոց. և առաջի ձեր հայրք և եղբարք՝ զամենայն մեղս զորս գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով. Եւ ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ։ Մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ՝ խնդրեցէ՛ք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն։

Պատասխանեսցեն որք մերձն են։

Ողորմեսցի՛ քեզ Աստուած հզօրն և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն և այժմուս և յառաջիկայէն փրկեսցէ և հաստատեսցէ յամենայն գործս բարիս։ Եւ հանգուսցէ զքեզ ՚ի հանդերձեալ կեանն. Ամէն։

Պատասխանեսցէ և ինքն։

Ազատեսցէ՛ և զձեզ մարդասէրն Աստուած, և թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս. ուղղեսցէ և զառաջիկայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն հզօրն և ողորմածն և նմա փառք յաւիտեանս ամէն։

Դպիրքն։

Յիշեսջի՛ր զմեզ առաջի անմահ Գառին Աս՛.

Քահանայն։

Յիշեալ լիջի՛ք առաջի անմահ Գառին Աստուծոյ։

Դպիրքն. Սաղմոս. Ղ.Թ. Փ.խ։

Աղաղակեցէ՛ք առ Տէր ամենա՛.

Սարկաւագն բարբառէ։

Սուրբ եկեղեցեաւս աղաչես՛.

Քահանայն։

Ի մէջ տաճարիս և առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ և զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ քո փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ և՛։

Քահանայն ասասցէ Սաղմոս ԽԲ. կցորդ։ Եւ ելցէ ՚ի խորանն։

Մտից առաջի սեղանոյ՛.

Սարկաւագն. Փոխ.

Դատ արա ինձ Աստուած և ի՛՛.

Սարկաւագն քարոզէ.

Եւ ես խաղաղութեան զՏէր՛՛.

Օրհնեսցուք զՀայրՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաւորութեան և երգել զերգս հոգևորս ամենա՛՛.

Քահանայն. ի ձայն.

Ի յարկի սրբութեան և ի տեղւոջս փառաբանութեան. հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս. առաջի աստուածընկալ և պայծառացեալ սուրբ Նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք. զսուրբ և զհրաշալի եւ զյաղթող զօրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ և՛՛.

Իսկ եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդածուն՝ ածցէ ի վերայ լանջացն զպատուական եմիփորոնն. եւ մատուցեալ առ ընծայարան սեղանոյն, եւ ի ծունկս անկեալ յօրգանօն արտասուօք լուռ և անձայնիւ տացէ զաղօթս առ Սուրբ Հոգին անօրինիչ գործոյն.

Գրիգորի Նարեկացւոյն.

ԱՄԵՆԱԿԱԼ ԲԱՐերար մարդասէր Աստուած բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար, Հօր հզօր Հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութեան՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։

Մատչիմք մեծաւ դողութեամբ՝ սաստիկ երկիւղիւ՝ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննին զօրութեանդ, իբր ածուակցի փառակցի և ա-

բարձակցի հայրենի անկա-
պուտ պատուոյդ, և քրն-
նողի ծածկութեան խորոց
խորհրդոց ամենակատար
կամաց Հօրդ Էմմանուէլի՝
զքեզ առաքչի, փրկչի և
կենդանատուի և արարչի
ամենայնի։ Ի ձեռն քոյ
ծանուցաւ մեզ երրեակ
անձնաւորութիւն միա-
նական Աստուածութեա-
նըդ, յորոց մի և դու ճա-
նաչիս անհաս։ Քեւ և ի
ձեռն քոյ առաջինքն նա-
հապետական տոհմին շա-
ռաւիղք՝ տեսանողք ան-
ուանակոչեալք, զանցեալ-
ոցն և զգալոցն, զեղեալ-
ոցն եւ զոչ գոյացեալսն,
անստուերաբար բարբա-
ռոյ բանի վերա-
պատմեցին։

Հոգի Աստուծոյ քարո-
զեալ զքեզ Մովսիսի, որ
ի գնալն քոյ ի վերայ ջրո-
ցըն՝ անպարագիր զօրու-
թիւն, ահեղ շրջարկու-
թեամբ տածողականաւ՝
թեւապարփակ պաշտպա-
նողօրէն գթասիրեալ ի
ծնունդս նորոգս՝ զաւա-
զանին խորհուրդ
ծանուցեր։

Յոր կերպարան օրինա-
կութեան՝ նախ քան ըղ-
կատուցանել զլոյծդ մա-
ծուած վերջնում փարա-
գուրիդ՝ յօրինեցեր կա-
րող տիրապէս զբովան-
դակ բնութիւնս ամենից
բնաւից բոլորից գոյից ա-
մենայնէից՝ յանէից։ Քեւ
առեղծանին ի նորոգու-
թիւն յարութեան ամե-
նայն եղեալքս առ ի քէն՝
յայնմ ժամանակի, որ է
օր վերջին՝ այսմ կենցաղի,
և օր առաջին՝ երկրին կեն-
դանեաց։ Քեզ հնազան-
դեցաւ մութեամբ կա-
մացն՝ որպէս հօրն խո-
րում, ազգակիցն քո՝ էա-
կիցն Հօր՝ անդրանիկն Որ-
դի. մերով կերպիւ զքեզ

աւետարանեաց ճշմարիտ Աստուած՝ հաւասար և համագոյ Հօր իւր հզօրի. և զոր ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իբր զաստուածամարտիցն՝ զքո հնաստելոյն չարաբանական բերանս կարկեաց, և զիւրն շնորհեաց արդարն և անարատն՝ գտիչն ամենայնի. որ վասն մեղաց մերոց մատնեցաւ, եւ յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։

Նմա փառք ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ Հօր ամենակալի յաւիտեանս յաւիտենից. Ամէն։



Դարձեալ կրկնեսցի ի նոյն կարգ բանի, մինչև վստահութիւն վերհայեցողութեան լուսոյ հրաշալեաց յայտնեսցի։ Ազդեալ աւետարանեալ վերստին կրկին զխաղաղութիւն։

ԱՂԱՉԵՄՔ ԵՒ աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամանակ Հոգւոյդ գըթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առ ողորմածդ Հայր. որ զսուրբս պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրելոյդ Հօր։ Արդ՝ ազատեա զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քում բնակութեան. և մի շիջցին առ ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք ի տեսականացըս աչաց իմաստից. վասն զի զքեզ ուսաք միանալ

ի մեզ ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։

Եւ քանզի մինդ յԵրրորդութենէդ պատարագի, եւ միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի քո. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս ամենայն պատրաստութեամբ՝ ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան՝ ընդունիլ զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան։

Եւ հալեսցի՛ ի հրոյս յայսմանէ զայթակղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն՝ ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս Որդւովդ Աստուծոյ Հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոցն երանութեան։

Այո՛, այո՛, և ես մի եմ ի նոցանէ. և զիս ընկա՛լ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի լուացեալս։ Զի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո աստուածութիւնդ՝ ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար ի մի կամս, և ի մի իշխանութիւն գովութեան։

ի Ձայն։

Զի քո՛ է գթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Ապա յարուցեալ զայն առ ընծայարան Սեղանոյն: Եւ որ մատուցանէ նախասարկաւագն զնշխարն,

Զոր առեալ Քահանայն դնէ ի մաղզմայն տակաւ:

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ բազմեալ հանգչի յանարուեստ աթոռ. զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. ☞ օրհնեցէ՛ք՝ գովեցէ՛ք և բարձր արարէ՛ք զնա յաւիտեանս:

Եւ առեալ զգինին՝ արկանէ խաչանիշ ի Սկիհն տակաւ:

Յաղագս յիշատակի փըրկագործ Տնօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան. ☞ օրհնեցէ՛ք՝ գովեցէ՛ք եւ բարձր արարէ՛ք զնա յաւիտեանս:

Եւ տարածէ զաղօթս Յովհաննու Ոսկեբերանին ի ծածուկ:

Տէր Աստուած մեր որ զերկնաւոր հացդ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ըզկերակուրդ ամենայն աշխարհի՝ առաքեցեր փըրկիչ և կեցուցիչ և բարերար՝ ☞ օրհնել և սրբել ըզմեզ. ինքնին դու Տէր ☞ օրհնեա՛ և այժմ զառաջադրութիւնս զայս: Ընկալ զսա յերկնային քո սեղանդ:

Յիշեա՛ որպէս բարերար եւ մարդասէր զմատուցողս և վասն որոց մատուցանի:

Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոյ քոյ: Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւն փառացդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ և".

Եւ ոքաղեսցէ տակաւ. Սաղմոս Ղ.Բ.

Տէր թագա". Հաստա". Ամբարձան". Ի ձայնէ". Սքանչելի". Տան քում".

Եւ խաչակնքեսցէ երիցս ասելով:

Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո:

Եւ արկանէ զխունկն ասելով:

Խունկ մատուցանեմ առաջի քո Քրիստոս բուրումն հոգևորական: Ընկալ ի սուրբ յերկնային և յիմանալի քո մատուցարանդ ի հոտ անուշից: Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս և զպարգևս Հոգւոյդ Սրբոյ. եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյդ Սրբոյ այժմ և".

Եւ ապա խնկելով ի մէջ Եկեղեցւոյն իջանէ հանդերձ սարկաւագօքն, և եկեալ ի վեր՝ երիցս երկրպագցէ Սեղանոյն:
Եւ Նախասարկաւագն ի մէջ Եկեղեցւոյ կալով ձայնեսցէ:

Օրհնեա՛ Տէր:

Եւ Քահանայն ի ձայն ասասցէ:

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր և Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւ".

Եւ սկսանին դպիրքն Ժամամուտ ըստ պատշաճի աւուրն. Եւ յաւարտին ձայնեսցէ Նախասարկաւագն:

Եւ ևս խաղաղու". Օրհնեա՛ Տէր:

Եւ Քահանայն ասասցէ:

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և". Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն:

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն:

Աստուծոյ երկրպագեսցուք.

Դպիրքն:

Առաջի քո Տէր:

Եւ Քահանայն ասասցէ ի ձայն:

Տէր Աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննին է եւ փառքդ անհասանելի: Որոյ ողորմութիւնդ անչափ է. և գթութիւնքդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում, նայեա՛ց 'ի ժողովուրդս քո՝ և ի տաճարս այս սուրբ: Եւ արա՛ ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն քո և գթութիւն: Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և".

Եւ սկսանին տալ Դպիրքն Սաղմոս և Շարական բստ պատշաճին։

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասասցէ զԱղօթս, ի ծածուկ։

Տէր Աստուած մեր կեցո՛ զժողովուրդս քո. և օրհնեա՛ զժառանգութիւնս քո. զլրումն Եկեղեցւոյ քո պահեա՛. սրբեա՛ զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով. և մի՛ թողուր զյուսացեալս ՚ի քեզ։ Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւի″.

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօթել. և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգևել խոստացար։ Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ ի յօգուտն կատարեա՛։ Շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քում ճշմարտութեանդ։ Եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգևելով։ Զի բարերար և մարդասէր ես Աստուած. և քեզ վայելէ փառք իշխանու″.

Եւ ի փառս տան Դպրաց, երկրպագեն առաջի բեմին ամենեքեան։

Եւ Քահանայն երկրպագելով Սեղանոյն ասասցէ զԱղօթս, ի ծածուկ։

Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց քոց։ Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց. և լինել պաշտօնակից մեզ՝ եւ փառաբանակից քում բարերարութեանդ։

Ի Ձայն։

Զի քո՛ է կարողութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. Ամէն։

Եւ համբուրեսցեն զՍեղանն, և Սարկաւագունքն գոչեսցեն։

Պռօսխումէ՛։

Ի Սարկաւագաց մի ոմն բարձրացուցանէ զԱւետարանն Սուրբ.

Եւ Դպիրքն ընդ խորհրդոյ տաւղն երգեն զԵրեքսրբեանն։

Սուրբ Աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար". և այլն։

Եւ Քահանայն զայս աղօթս ասասցէ. ի ծածուկ։

Աստուած Սուրբ՝ որ ի սուրբս հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ Սերովբէք գովեն զքեզ՝ եւ Քերովբէք փառաբանեն. և ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկրպագանեն։ Որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նմանութեան. և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր. և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և ըզգօնութիւն։ Եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդիր ի մերայ նորա ապաշխարութիւն փրկութեան։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայսս քո ի ժամու յայսմիկ, կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ։ Եւ զօրհնութիւն երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ։ Դու Տէր՝ ընկալ ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս. եւ պահեա՛ ըզմեզ քոյին քաղցրութեամբդ. թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր ըզկամայ և զակամայ։ Սրբեա՛ զհոգի՝ զմիտս՝ և ըզմարմինս մեր. և շնորհեա՛ ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց։ Բարեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին եւ ամենայն Սրբոց քոց՝ որք յաւիտենից քեզ բարեհաճեցան։

Զի սուրբ ես Տէր Աստուած մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և".

Եւ ի կատարել Երեքսրբենոյն և աղօթիցն՝ Սարկաւագն քարոզէ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր". Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և".

Եւ Քահանայն՝ բազկատարած ասասցէ զԱղօթս, ի ծածուկ:

Տէր Աստուած մեր՝ ըզբազկատարած զաղաչանըս ծառայից քոց վերընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում: Զգթութիւն քո առաքեա ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ի քէն առատ ողորմութեանդ:

Սարկաւագն ձայնեացէ:

Օրհնեա Տէր:

Եւ Քահանայն ասասցէ, ի ձայն:

Օ ի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով, և քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն եւ պատիւ այժմ և միշտ և յաւի".

Յետ այսորիկ երկրպագէ Սեղանոյն Քահանայն, և եկեալ բազմի յաստիճանն:

Եւ սկսանին Դպիրքն Սաղմոս ըստ խորհրդոյ աւուրն:

Եւ ընթերցցին զգիրս Մարգարէականս և զԱռաքելականս:

Եւ զկնի Ալէլուիա, ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն. և յաւարտմանն՝ Սարկաւագն ձայնեացէ:

Օրթի:

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ի վերայ ժողովրդեանն ասելով:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն:

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն:

Երկիւղածութեամբ լուարուք:

Սարկաւագն:

Սուրբ Աւետարանէս որ ըստ Մատթէոսի:

Դպիրքն:

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սարկաւագն:

Պրօսխումէ՛:

Դպիրքն:

Ասէ Աստուած:

Եւ Սարկաւագն ընթերցցի զԱւետարանն Սուրբ. և յաւարտմանն՝ ասասցեն ամենեքեան:

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Եւ ապա ասեն զնիկիական դաւանութիւնն ի լման:

A 9908



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀԱՒԱՏԱՄՔ Ի ՄԻ Աստուած Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին. այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ՝ լոյս ի լուսոյ՝ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճըշմարտէ, ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն ի բընութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փըրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ՝ մարդացաւ՝ ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն Սրբով։

Որով էառ մարմին՝ հոգի և միտ. և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս։ Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի Սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և ի Մարգարէս և յԱւետարանս։

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական Եկեղեցի։

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քա-

ութիւն, եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց. յարքայութիւնն երկնից, և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին. կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ Եկեղեցի:

Լուսաւորչին ասացեալ:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով Սրբոյ Երրորդութեանն և մի Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւի՛՛.

Սարկաւագն քարոզէ ի ձայն:

Եւ ևս խաղաղութեան զՏէր ա՛՛.

Դպիրքն:

Տէր ողորմեա:

Եւ ևս հաւատով աղաչեսց՛՛:

Մինչ նորա երգեն, Քահանայն աստ ասէ զԱղօթս ի ծածուկ:

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս՝ որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգեւօք բարերարութեան քո: Որ դու քոյին կամաւ ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու յաղագս մեղաց մերոց: Եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արա և զմեզ Տէր, աղաչեմք զքեզ, աստուածային պարգեւացդ. թողութեան մեղաց՝ եւ ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ:

Ի ձայն:

Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և Սուրբ Հոգւոյդ՛՛.

Խաղաղութիւն ամենեցուն:

Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր՝ որ ի վեր է քան զամենայն միտս և զբանս։ Ամրացո՛ զմեզ և աներկիւղ պահեա՛ յամենայն չարէ։

Հաստատեա՛ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն. վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս Ամէն։

Սարկաւագն։

Օրհնեա՛ Տէր։

Քահանայն խաչակնքէ ի վերայ ժողովրդեանն ասելով, ի ձայն։

Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան։

Յետ այսորիկ՝ եթէ եպիսկոպոս իցէ ի բաց հանցէ զեմիփորոնն։

Սարկաւագն։

Սաղմոս ասացէք Տեառն Ա՛ս.

Դպիրքն.

Ասեն զՍրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն։

Սարկաւագն։

Մի ոք յերախայից։

Դպիրքն։

Մարմին Տէրունական։

Եւ զան խնկարկելով ի Սուրբ Խորհուրդն։

Սարկաւագն։

Յարեաւ եհար զխո՛.

Դպիրքն։

Եւ ցնծայ նա որպէս հըս՛.

Եւ ապա եղանակեսցեն։

Որք զՔրովբէիցն։

Ապա ի Սարկաւագացն վերաբերիցի Սրբական հացն՝ և անմահութեան բաժակն ի Սուրբ Սեղանն։ Եւ մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնարհեսցի առաջի Սրբոյ Սեղանոյն և խորհրդաբար աղօթեսցէ, ի ծածուկ։

Ո՛չ ոք արժանի է յըմբռնելոյս մարմնաւոր ախտիւք եւ ցանկութեամբ մատչիլ ի սեղան քո. կամ սպասաւորել արքունական փառաց քոց։ Քանզի պաշտել զքեզ՝ մեծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է։ Սակայն վասն անչափ բարերարութեան քոյ՝ անպարագրելի բանդ Հօր, եղեր մարդ՝ և Քահանայապետ մեր երևեցար։

Եւ իբր տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան և անարիւն զենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ։ Վասն զի դու ես Տէր Աստուած մեր՝ որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց։ Որ ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս․ Սերովբէից Տէր եւ Թագաւոր Իսրայէլի։ Որ միայն սուրբ ես և ի սուրբս հանգուցեալ։

Աղաչեմ զքեզ միայն բարերար և հեշտալուր․ նայեա՛ յիս ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո։ Եւ սրբեա՛ զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին։ Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ Սուրբ Հոգւոյդ՝ որ զգեցեալ եմ զքահանայականն շնորհ, կալ առաջի սրբոյ Սեղանոյս և քահանայագործել զքո անարատ մարմինդ և զպատուական արիւնդ։

Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ՝ մաղթեմ. մի դարձուցաներ զերեսս քո յինէն. և մի մերժեր զիս ի ծառայից քոց։ Այլ արժանի արա՛ մատուցանել քեզ զընծայս զայս՝ յինէն ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ։

Վասն զի դու ես՝ որ մատուցանես՝ և մատչիս՝ և ընդունիս, և տաս Քրիստոս Աստուած մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն Հարբդ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ․ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն։

Եւ ընծայքն վերաբերին ի Սեղանն։

Եւ Քահանայն խնկեսցէ և լուասցէ ըզմատունսն ասելով։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ"։

Սարկաւագն։

Եւ ևս խաղաղութեան զՏէր ա"։

Եւ ևս հաւատով և սրբութ"։

Մինչ նորա երգեն՝ Քահանայն ձեռնամած աղօթեսցէ ի ծածուկ:

ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ զօրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց: Որ յանէութենէ ըզբնաւս ի ցուցակութիւն ածեալ գոյացուցեր: Որ եւ զմեր զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս, այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս:

Դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագիս՝ ընկալ առ ի մէնջ զառաջադրութիւնս զայս, եւ աւարտեա զսա ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան միածնի քոյ. դեղ թողութեան մեղաց պարգեւեա՛ ճաշակողացս զհացս զայս եւ զբաժակս:

ի Ձայն:

Շնորհօք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր միանգամայն եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք իշխա″.

Խաղաղութիւն ամենե″.

Դպիրքն:

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն:

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպիրքն:

Առաջի քո Տէր:

Սարկաւագն:

Ողջոյն տուք միմեանց ի համ″.

Դպիրքն:

Քրիստոս ի մէջ մեր յայտ″.

Եւ համբուրեն զՍեղանն եւ զմիմեանս. եւ Սարկաւագն ձայնեսցէ:

Ահա կացցուք երկիւղիւ կաց″.

Դպիրքն:

Առ քեզ Աստուած:

Սարկաւագն:

Պատարագ Քրիստոս մատ″.

Դպիրքն:

Ողորմութիւն եւ խաղաղու″.

Քահանայն դարձցի եւ խաչակնքեսցէ եւ ասասցէ ի Ձայն:

Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.

Եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպիրքն։

Ամէն և ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Զգլուխս զգլուխս ամենայն"։

Դպիրքն։

Ունիմք առ քեզ Տէր ամենակալ։

Սարկաւագն։

Եւ գոհացարուք"։

Դպիրքն։

Արժան և իրաւ։

Մինչ նոքա երգեն, Քահանայն ձեռնամած աղօթեսցէ, ի ծածուկ։

Արժան է ստուգապէս և իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիրպագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ։ Որ զանիծիցն բարձեր ըզկրձիմն՝ քոյին անզննելի և արարչակից բանիւդ։ Որ ժողովուրդ իւրեան առեալ զեկեղեցի՝ սեպհականեաց ըզհաւատացեալս ի քեզ։ Եւ զննելի բնութեամբ ըստ ի Կուսէն տնտեսութեանն՝ հաճեցաւ բնակել ի մեզ։ Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար։

Վասն զի որում ոչն համարձակէին առաջի կալ զուարթնոցն զօրք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ Աստուածութեանդ։ Եղեալ այդպիսիդ մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

Ի Ձայն։

Եւ ընդ Սերովբէսն և ընդ Քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել։

Դպիրքն։

Սուրբ Սուրբ Սուրբ Տէր զօրութեանց լի են երկինք և երկիր փառօք քո օրհնութիւն ի բար"։

Մինչ նոքա երգեն, Քահանայն բազկատարած ասասցէ, ի ծածուկ:

ՍՈՒՐԲ՝ Սուրբ՝ Սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ . և ո՛վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո ի մեզ զանբաւ բարեգործութեան զեղմունս ։

Որ և անդէն իսկ ի նախնումն զանկեալն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր ։

Մարգարէիւք, օրինացն տուչութեամբ, քահանայութեամբ, և ըստուերակերպ երնջուցն մատուցմամբ ։

Իսկ ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք ։

Ետուր մեզ զՈրդին քո միածին, պարտապան և պարտս . զենումն և օծեալ . գառն և երկնաւոր հաց . քահանայապետ և պատարագ ։

Վասն զի ինքն է բաշխող . և նոյն ինքն բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս ։

Վասն զի եղեալ հաւաստեաւ և առանց ցնորից մարդ . և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածնէն եւ ի Սուրբ Կուսէն Մարիամայ ։

Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց ։

Եւ յաշխարհակեցոյց՝ եւ յառիթն փրկութեան մերոյ՝ եկեալ կամաւ ի խաչ ։

Առեալ զհացն՝ ի սուրբ՝ յաստուածային՝ յանմահ՝ յանարատ եւ յարարչագործ ի ձեռս իւր . օրհնեաց՝ գոհացաւ՝ եբեկ եւ ետ իւրոց ընտրեալ՝ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով ։

Ի Ձայն։

Առէք կերէք Այս է
ՄԱՐՄԻՆ ԻՄ՝
որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։

Ի Ծածուկ։

Նոյնպէս եւ զբաժակն առեալ․ Օրհնեաց՝ գոհացաւ՝ էարբ և ետ իւրոց ընտրեալ՝ սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով։

Ի Ձայն։

Արբէք ի սմանէ ամենեքեան․ Այս է
ԱՐԻՒՆ ԻՄ՝
նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։

Ի Ծածուկ։

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնել՝ պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո միածին։

Եւ իջեալ ի սուրբն վարըս մահու՝ մարմնովն զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ։ Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հըզօրեղապէս։ Զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ Աստուած՝ զԱստուած կենդանեաց և մեռելոց։

Եւ առնու զընծայսն ի Ձեռն
Եւ ասացէ, ի Ծածուկ։

Եւ արդ մեք Տէր՝ ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան Միածնի քո։

Յիշեմք զդորա որ վասն մեր զփրկագործ չարչարանսն։ Զկենսատու խաչելութիւնն։ Զերեքօրեայ թաղումնն։ Զերանելի յարութիւնն։ Զաստուածապէս համբարձումնն։ Ըզնստիլն ընդ աջմէ քո Հայր։ Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն՝ խոստովանիմք և օրհնեմք։

Եւ զԸնծայսն առեալ ինչ բարձրացուցեալ մատուցանէ առ Հայր:
Եւ դիցէ ի վերայ Սրբոյ Սեղանոյն ասելով.
ի Ձայն:

Եւ զՔոյս՝ ի Քոյոց՝ Քեզ մատուցանեմք ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն:

Դպիրքն:

Յամենայնի Օրհնեալ ես Տէր".

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն բազկատարած ասասցէ, ի ծածուկ:

Զքեզ արդարև Տէր Աստուած մեր գովեմք. եւ զքեն գոհանամք հանապազ: Որ զանց արարեալ զմերոյն անարժանութիւնս, այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւոր: Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ Թափուր եմք միշտ, և ունայն գտանիմք հանապազ: Այլ ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանգ ապաւինեալ՝ համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն Մարմնոյ և Արեան միածնի քո Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայել է փառք իշխանութիւն և".

ի Ձայն:

Խ☞աղաղութիւն ամենեն".

Դպիրքն

Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն:

Աստուծոյ երկիրպագեսցուք:

Դպիրքն:

Առաջի քո Տէր:

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնարհեալ երկիրպագցէ Սեղանոյն և ասասցէ:

Երկիրպագանեմք՝ և աղաչեմք՝ և խնդրեմք ի քէն բարերար Աստուած: Առաքեա՛ ի մեզ եւ յառաջի եդեալ Ընծայս այս զմշտնջենաւորակից քո և զէակից Սուրբ Հոգիդ:

Դպիրքն:

Որդի Աստուծոյ որ պատարագ".

Եւ կացեալ Սարկաւագն առընթեր Քահանային երկիւղիւ և դողութեամբ մնայ:
Եւ ասասցէ ի ցած:

Ամէն օրհնեա՛ Տէր:

Եւ Քահանայն խաչակնքեսցէ զԸնծայսն ասելով. ի ծածուկ:

ՈՐՈՎ ԶՀԱՑՍ Օրհնե☞ալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յսի Քսի:

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յսի Քսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յսի Քսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յսի Քսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յսի Քսի:

Որով զհացս եւ զգինիս օրհնեալ մարմին եւ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և Փրկչին Յսի Քսի փոխարկելով Հոգւովդ քով Սրբով:

Երիցս կրկնեսցէ:

Ապա ասասցէ ի Ձայն:

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս, յանդատապարտութիւն ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց:

Եւ Քահանայն այսուհետև ո՛չ բարձրագոյն քան զԸնծայսն զձեռն իւր տարածեալ, այլ՝ խոնարհագոյն, և զաչսն ի նոյն յառեալ աղօթեսցէ. ի ծածուկ:

Սովաւ շնորհեա՛ զսէր՝ զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի: Սրբոյ Եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ Եպիսկոպոսաց: Քահանայից: Սարկաւագաց: Թագաւորաց: Աշխարհի Իշխանաց: Ժողովրդոց: Ճանապարհորդելոց: Նաւելոց: Կալելոց: Վտանգելոց: Աշխատելոց: Եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:

Սովաւ և օդոց շնորհեա՛ զբարեխառնութիւն. և անդոց զպտղաբերութիւն: Եւ ախտացելոց ի

պէսպէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն:

Սոցա հանգո՛ զամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս ննջեցեալսն:

Զնախահարս:

Զհայրապետս:

Զմարգարէս:

Զառաքեալս:

Զվկայեալս:

Զեպիսկոպոսունս:

Զերիցունս:

Զսարկաւագունս:

Եւ զբնաւ ուխտ եկեղեցւոյ քոյ սրբոյ: Եւ զամենեսեան յաշխարհական կարգէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս:

ի Զայն:

Ընդ որս և մեզ այց արասցես բարերար Աստուած աղաչեմք:

Դպիրքն:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Քահանայն:

Աստուածածնին Սրբոյ Կուսին Մարիամու: Եւ Յովհաննու Մկրտչին:

Ստեփաննոսի նախավկայյին: Եւ ամենայն Սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ Պատարագս աղաչեմք:

Դպիրքն:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Սարկաւագն յաջակողմն Սեղանոյն. ձեռնամած ասասցէ:

Առաքելոց Սրբոց Մարգարէից՛՛.

Եւ մինչ նոքա երգեն զՔարոզս, Քահանայն ասասցէ զԱղօթս ի ծածուկ, զի ի միասին աւարտեսցին:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, եւ օրհնեա՛ զՍուրբ՝ Կաթուղիկէ և զԱռաքելական Եկեղեցի քո:

Զոր փրկեցեր պատուական արեամբ Միածնի քո. եւ ազատեցեր Խաչիւն Սրբով:

Շնորհեա՛ սմա զանշարժ զխաղաղութիւն:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զամենայն ուղղափառ Եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութեամբ հաստատեն ի մեզ զբանն ճշմարտութեան:

Ի Ձայն:

Եւս առաւել զԵպիսկոպոսապետն մեր, եւ զպատուական Հայրապետն ամենայն Հայոց զՏէր (այս անուն), շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

Եւ դարձեալ Սարկաւագն գայ ի տեղի իւր: Եւ քարոզեսցէ բարձր:

Գոհութիւն և փառաբանու″.

Մինչ նոքա քարոզեն՝ Քահանայն ասասցէ զԱղօթս, ի ծածուկ:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, եւ օրհնեա՛ զ.քո առաջի կացեալ ժողովուրդս՝ եւ ըզՊատարագիս մատուցողս: Եւ պարգեւեա՛ սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զուխտաւորս և զպտղաբերիչս Եկեղեցւոյ.քում Սրբոյ. և որ.ք յիշեն զաղ.քատս ողորմածութեամբ:

Եւ հատո՛ նոցա զվարձս նոցա ըստ ընդաբոյս առատութեան .քում հարիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումդ:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛, եւ գթա՛ ի հոգիս հանգուցելոցն: Հանգո՛ զնոսա և լուսաւորեա՛՝ և դասաւորեա՛ ընդ սուրբս .քո յար.քայութեանդ երկնից. և արժանի արա՛ ողորմութեան .քում:

Յիշեա՛ Տէր եւ զհոգի ծառայիս .քոյ (այս անուն). եւ ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան .քում, եւ հանգո՛ այցելութեամբ ի լոյս երեսաց .քոց:

Եթէ հիւանդն է՝

Փրկեա՛ զնա յամենայն որոգայթից հոգւոյ եւ մարմնոյ:

Յիշեա՛ Տէր և զայնոսիկ որ.ք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս եւ զհանգուցեալս. եւ կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա և զմերս,

ընդ ուղղորդն և որ լինի է փրկութեամբ:

Եւ վարձատրեա՛ բոլորեցունց զանանց և զերանելի բարութիւնդ: Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարայս՛ յընդունելութիւն Մարմնոյ և Արեան Միածնի քո Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում քեզ Հօր Ամենակալի՝ հանդերձ կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւովդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ".

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ ի Ձայն:

Եւ եղիցի ողորմութիւն մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ձեզ ընդ ամենեսեան:

Դպիրքն:

Ամէն. և ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն:

Ամէն. և ես խաղաղութեան".

Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք եւս առա".

Վասն մատուցեալ սուրբ եւ".

Մինչ Սարկաւագն քարոզէ՝ Քահանայն ասասցէ, ի ծածուկ:

Աստուած ճշմարտութեան և Հայր ողորմութեան՝ գոհանամք զքէն: Որ ի վեր քան զերանելի Նահապետսն, ըզմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն: Վասն զի նոցա Աստուած կոչեցար. իսկ մեզ՝ Հայր հաճեցար անուանիլ գըթալով:

Եւ այժմ Տէր՝ աղաչեմք զքեզ, զայսպիսի առ իքէն զնորոգ և զպատուական անուանադրութեանս շնորհ որ ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ ի մէջ Եկեղեցւոյ քում Սրբոյ:

ի Ձայն:

Եւ տո՛ւր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր՝ կարդալ ըզքեզ երկնաւորդ Հա՛յր, երգել և ասել:

Եւ Դպիրքն՝ բազկատարած եղանակեսցեն.

Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի անուն քո, եկես".

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն աղօթեսցէ, ի ծածուկ:

Տէր տերանց, Աստուած աստուծոց, Թագաւոր յաւիտենական, արարիչ ամենայն արարածոց, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մի տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ եւ ապրեցո՛ ի փորձութենէ:

Ի Ձայն:

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն:

Եւ ընդ Հոգւոյդ քում:

Սարկաւագն:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրքն:

Առաջի քո Տէր:

Սարկաւագն:

Օրհնեա՛ Տէր:

Քահանայն խոնարհեսցի և ամենայն ժողովուրդն չոքեսցի ի ծունկս:

Եւ Քահանայն աղօթեսցէ, ի ծածուկ:

Որ աղբիւրդ ես կենաց և բխումն ողորմութեան Հոգիդ Սուրբ: Ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագանեն աստուածութեան քում: Պահեա՛ զսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգիս սոցա զձեւ մարմնոյ ցուցակի, առ ի ժառանգութիւն և ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:

Ի Ձայն:

Քրիստոսիւ Յիսուսիւ տերամբ մերով. ընդ որում քեզ Հոգւոյդ Սրբոյ և Հօր Ամենակալի վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւ".

Եւ Քահանայն առցէ զՍուրբ Հացն ի ձեռն:

Եւ Սարկաւագն ձայնեսցէ բարձր:

Պրոսխումէ:

Եւ Քահանայն բարձրացուցանէ ակներև ա-
մենայն ժողովրդեանն։

Եւ ասասցէ ի Ձայն։

Ի Սրբութիւն Սրբոց

Դպիրքն Բարձր Ձայնիւ։

Միայն Սուրբ, միայն Տէր,
Յիսուս Քրիստոս".

Քահանայն։

Օրհնեալ Հայր Սուրբ
Աստուած Ճշմարիտ։

Դպիրքն։

Ամէ՞ն։

Քահանայն։

Օրհնեալ Որդին Սուրբ
Աստուած Ճշմարիտ

Դպիրքն։

Ամէ՞ն։

Քահանայն։

Օրհնեալ Հոգին Սուրբ
Աստուած Ճշմարիտ։

Դպիրքն։

Ամէ՞ն։

Քահանայն։

Օրհնութիւն և փառք
Հօր և Որդւոյ և Հո-
գւոյն Սրբոյ, Այժմ և".

Դպիրքն։

Ամէ՞ն

Հայր Սուրբ, Որդին Սուրբ,
Հոգին Սուրբ,
Օրհնութիւն Հօր և Որդւոյ
և Սրբոյ Հոգւոյն".

Եւ մինչ նոքա երգեն զայս, Քահանայն խո-
նարհեսցի և աղօթեսցէ,
ի Ծածուկ։

Նայեաց Տէր մեր Յիսուս
Քրիստոս յերկնից ի
սրբութենէ քումմէ, և
յաթոռոյ փառաց թա-
գաւորութեան քո. եկ
ի սրբել և ի կեցուցանել
զմեզ։ Որ ընդ Հօր նստիս
և աստ պատարագիս։

Արժանի արա տալ մեզ
յանարատ մարմնոյ քում-
մէ և ի պատուական ա-
րենէ. և ի ձեռն մեր ա-
մենայն ժողովրդեանս։

Եւ զայս ասացեալ երկիրպագցէ
և համբուրեսցէ զՍեղանն։

Եւ առեալ զՍուրբ Մարմինն ողջ թացցէ
յանապական Արիւնն և ասասցէ.
ի ծածուկ։

Տէր Աստուած մեր՝ որ
կոչեցեր զմեզ յանուն Մի-
ածնի Որդւոյ քո Քրիս-
տոնեայս. եւ շնորհեցեր
մեզ Մկրտութիւն հոգե-
ւոր աւազանաւն ի թո-
ղութիւն մեղաց. և ար-

ժամի արարեր զմեզ հաղորդիլ Սուրբ Մարմնոյ և Արեան Միածնի քոյ։

Եւ այժմ աղաչեմք զքեզ Տէր՝ արա զմեզ արժանի ընդունիլ զՍուրբ Խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն։

Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւի″.

*Եւ բարձրացուսցէ ակներև ժողովրդեանն և ասասցէ. ի Ձայն։*

## Ի ՍՈՒՐԲ Ի ՍՈՒՐԲ

Պատուական Մարմնոյ և յԱրենէ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ ճաշակեսցուք սրբութեամբ. որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում։

Սա է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն, և Թողութիւն մեղաց։

Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում։

Սաղմոս ասացէք երկնաւոր Թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբէականս։

*Սարկաւագն ձայնեսցէ։*

Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում″.

*Եւ Դպիրքն եղանակեսցեն։*

Քրիստոս պատարագեալ բաշխի″.

*Մինչ նոքա երգեն, Քահանայն առցէ զՄարմինն ի ձեռն, և համբուրեսցէ արտասուօք ասելով։*

Ո՛վ օրհնութիւն, կամ զո՛ր գոհութիւն ի վերայ Հացիս եւ Բաժակիս ասասցուք։

Այլ Յիսուս զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբ և Ամենասուրբ Հոգւովդ. այժմ և միշտ և յաւի″.

*Դարձեալ ասասցէ։*

Խոստովանիմ և հաւատամ, զի դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեղս աշխարհի։

*Եւ բեկեալ արկցէ ի բաժակն Արեան ասելով։*

Լրումն Հոգւոյն Սրբոյ։

Եւ ապա առեալ զմի մասն ի Ձեռն, ասասցէ արտասուօք և զղջմամբ առ Հայր և Որդի, ի ծածուկ։

ՀԱՅՐ ՍՈՒՐԲ ՈՐ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քո. Եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգեւոր աւազանին։

Արժանի արա՛ ընդունել զՍուրբ Խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն։ Տպաւորեա՛ ի մեզ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ որպէս ի Սուրբ Առաքեալսն, որք ճաշակեցին և եղեն մաքրիչք ամենայն աշխարհի։

Եւ արդ՝ Տէր Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մասնաւորեա՛ ճաշակման երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց. մի՛ հայեր յանարժանութիւնս իմ. եւ մի՛ արգելցես զշնորհս Հոգւոյդ Սրբոյ։

Այլ ըստ անքաւ մարդասիրութեան քում, պարգեւեա՛ զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց։ Որպէս խոստացաւ և ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ՝ ամենայն որ ուտէ զՄարմին իմ և ըմպէ զԱրիւն իմ, կեցցէ ի յաւիտեան։

Արդ՝ արա՛ զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն և արբցեն ի սմանէ, հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և".

Խաղաղութիւն ամենեցուն։

Գոհանամք զքէն Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդել Սուրբ Մարմնոյ և Արեան քոյ։ Եւ այժմ աղաչեմ զքեզ, մի՛ լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողու-

թիւն մեղաց. յաւուղղու-
թիւն հոգւոյ և մարմնոյ.
և ի կատարումն ամենայն
գործոց առաքինութեան։

Որպէս զի սրբեսցէ սա
զշունչս իմ և զհոգի եւ
զմարմին իմ։ Եւ արասցէ
զիս տաճար և բնակարան
Ամենասուրբ Երրորդու-
թեանդ։ Զի ընդ սուրբս
քո արժանի եղէց փա-
ռաւորել զքեզ ընդ Հօր
եւ ընդ Սուրբ Հոգւոյդ,
այժմ և միշտ և յաւի՛.

Յովհաննու Ոսկեբերանին ասացեալ Աղօթք։

Գոհանամ և մեծացու-
ցանեմ և փառաւո-
րեմ զքեզ, Տէր Աստուած
իմ, զի զիս զանարժանս
արժանացուցեր յաւուր
յայսմիկ հաղորդակից լի-
նել աստուածային և սո-
սկալի Խորհրդոյ քում. ա-
նարատ Մարմնոյդ և պա-
տուական Արեանդ. վասն
այսորիկ զսոսա ի բարե-
խօսութիւն ունելով, ա-
ղաչեմ յամենայն աւուրս
և ի ժամանակս կենաց ի-
մոց՝ ընդ սրբութեանքդ
պահեա զիս։ Որպէս զի
յիշելով զբարեգործու-
թիւնս քո եւ կենդանի
եղէց ընդ քեզ։

Որ վասն մեր չարչարե-
ցար եւ մեռար եւ յար-
եար. մի մերձեսցի, Տէր իմ
և Աստուած, խորտակիչն,
կնքելով անձին իմոյ պա-
տուական Արեամբդ քով։
Ամենակարող, մաքրեա զիս
սոքօք յամենայն մեռել-
ոտի գործոց իմոց, որ միայ-
նդ ես անմեղ։

Ամրացո՛ զկեանս իմ, Տէր,
յամենայն փորձութենէ.
եւ զպատերազմողն իմ
դարձո՛ յինէն յետս, պատ-
կառեալ եւ ամաչեցեալ՝
որչափ յառնէ ի վերայ իմ։
Ամրացո՛ զգնացս մտաց
և լեզուի իմոյ, եւ զամե-
նայն ճանապարհս մարմ-
նոյ իմոյ։

Լեր համապարտ ընդ

իս, ըստ անսուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ զՄարմին իմ, եւ ըմպէ զԱրիւն իմ, նա յիս բնակեսցի և ես ի նմա։ Դու տացեր մարդասէ՛ր, կացո՛ զբանս աստուածային անլուծանելի հրամանաց քոց։

Քանզի դու ես Աստուած ողորմութեան, եւ գթութեան և մարդասիրութեան և պարգեւիչ ամենայն բարեաց. և քեզ վայելէ փառք հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ այժմ և միշտ"։

*Եւ ապա տեառնագրեսցէ զինքն, և խնդրեսցէ ի ճշմարտէն Աստուծոյ զպէս պէս հայցուածս անձին իւրոյ, և ժողովրդեան, և աշխարհի. և թողութիւն խնդրեսցէ վասն իւրոց թշնամեաց եւ ատելեաց։ Եւ անդէն առնու և դողութեամբ ճաշակեսցէ ի Մարմնոյն և արբցէ ի Բաժակէն, ասելով։*

Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ ի Հայր և յՈրդի և ի Հոգիդ Սուրբ։ Հաւատով ճաշակեմ զսուրբ և զկենդանարար եւ զփրկագործ Մարմնոյ քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց։

Հաւատով ըմպեմ զսրբարար և զմաքրիչ Արիւնս քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց։

Մարմին քո անապական լիցի ինձ ի կեանս։ Եւ սուրբ Արիւն քո ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։

*Եւ Սարկաւագն հաղորդեսցի. և յետ հաղորդելոյն դարձցէ առ ժողովուրդն և ասէ բարձր։*

Երկիւղիւ և հաւատով յառաջ"։

*Եւ Դպիրքն՝ բարձր ձայնիւ։*

Աստուած մեր և Տէր մեր երեւ"։

*Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն. բայց ո՛չ ի բերանն, այլ յափն տալով զՍրբութիւնն. և ամենայն արժանաւորքն հաղորդեսցին. և յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն Ընծայիւն. և ասասցէ։*

Կեցո՛ Տէր զժողովուրդս քո և օրհնեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Եւ Դպիրքն երգեսցեն ։

Լցաք ի բարութեանց քոց Տէր՛՛։

Քահանայն ասասցէ, ի ծածուկ։

Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ Սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան. ուր փառաբանի անուն Սուրբ Երրորդութեանդ ։

Ալէլուիա ։

Գոհանամք զքէն Քրիստոս Թագաւոր, որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար Մարմնով եւ Արեամբ քով Սրբով։ Շնորհեա զքաւութիւն եւ զմեծ ողորմութիւն ։

Ալէլուիա ։

Գոհանամք զքէն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր Սուրբ զեկեղեցի։ Անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ յայժմհետէ մինչեւ յաւիտեան ։

Ալէլուիա ։

Սարկաւագն ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղ՛՛։
Եւ եւս հաւատով ընկալեալք՛՛։

Դպիրքն ։

Գոհանամք զքէն Տէր որ կե՛՛։

Քահանայն ասասցէ, ի ծածուկ։

Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան ։ Սովիմբ պահեա զմեզ սուրբս եւ անարատս, բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ ։ Հովուեա զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց եւ բարեսիրաց ։ Որով ամ՛ բացեալք յամենայն բանսարկուին ընդդիմութենէ, քում եւեթ արժանիեցուք լսել ձայնի ։ Եւ քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ հովուիդ հետեւիլ ։ Եւ առ ի քէն ընդունիլ զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից ։ Աստուած մեր եւ Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս ։ Որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ այժմ՛՛։

Խաղաղութիւն ամենեցուն։

Անքնին, անհաս, երրեակ ինքնութեանդ, հաստիչ, ընդունող եւ անբաժանելի, միանական սուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ ե".

Եւ ապա առցէ զԱւետարանն Սուրբ ի ձեռըս իւր։ Եւ երիցս երկրպագեալ համբուրեսցէ զՍուրբ Սեղանն։ Եւ իջանելով ի մէջ Եկեղեցւոյն ասասցէ զԱզօթս

ի Ձայն

Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ։

Կեցո՛ զժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո. զլրումն Եկեղեցւոյ քո պահեա՛։

Սրբեա՛ զոսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո։ Դու զնոսա փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով. եւ մի թողուր զմեզ յուսացեալս ի քեզ։

Զխաղաղութիւն պարգեւեա՛ ամենայն աշխարհի. Եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս։

Զի ամենայն տուրք բարիք՝ եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի քէն. որ ես Հայր լուսոյ եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ ե".

Եւ Դպիրքն ասասցեն երիցս։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ".

Եւ Քահանայն դարձցի առ ժողովուրդն եւ ասասցէ ի Ձայն։

Կատարումն օրինաց եւ Մարգարէից դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր.

Որ լցեր զամենայն հայրական տնօրէնութիւնս քո։

Լից եւ զմեզ Հոգւովդ քով Սրբով։

Սարկաւագն։

Օրհնի։

Քահանայն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Երկիւղածութեամբ լուարուք։

Քահանայն։

Սուրբ Աւետարանս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։
Գլ. Ա. 1-14։

Ի Հօրէ լուսոյ։

**ԻՍԿԶԲԱՆԷ ԷՐ** Բանն, և Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն։

Նա էր ի սկզբանէ առ Աստուած։

Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւն։

Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ եւ խաւար նմա ոչ եղեւ հասու։

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս։

Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ։

Ո՛չ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։

Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ։

Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ո՛չ ծանեաւ։

Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ո՛չ ընկալան։

Իսկ որք ընկալանն զնա ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն յանուն նորա։

Ոյք ո՛չ յարենէ, և ո՛չ

ի կամաց մարմնոյ, և ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան։ Եւ բանն

ՄԱՐՄԻՆ

եղեւ և բնակեաց ի մեզ. Եւ տեսաք զփառս Նորա զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ։

Սարկաւագն։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր զի սովաւ".

Քահանայն։

Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ Սուրբ և Պատուական Խաչիւդ քով ի խաղաղութեան. փրկեա յերեւելի և յաներեւոյթ թշնամեաց։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և".

Սարկաւագն։

Օրհնեցից զՏէր յամենայն ժամ".

Եւ Քահանայն խաչակնքեալ զժողովուրդն և ասասցէ բարձր։

Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սրբոյ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան.

Ամէն։

Եւ Դպիրքն ասասցեն.

Ի Տէր պարծեսցի անձն իմ։

Եւ ընդ սաղմոսելն Դպրաց՝ բաշխեսցի Նշխար։ Եւ յաւարտմանն՝ Քահանայն դարձցի յարեւելս, և երկիրպագցէ առաջի Սրբոյ Սեղանոյն երիցս. և ասասցէ.

Տէր Յիսուս Աստուած՝ ողորմեա ինձ։

Եւ մտեալ յաւանդատունն մերկասցի ի զգեստուցն. և երթիցէ խաղաղութեամբ։



Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(80 Ⴆ)
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0068080

2908